



# ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքականության փաստաթուղթ



© Սույն քաղաքականության փաստաթուղթը պատրաստվել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿի կողմից:

Այս փաստաթուղթը նախատեսված է պետական քաղաքականություն և օրենսդրություն մշակողների, այս խնդրի շուրջ ադվոկացիա իրականացնող կառույցների և լայն հանրության համար: Փաստաթղթի մշակման համար հիմք են ծառայել աշխատավայրում սեռական ոտնձգությունների մասին կանանց իրական պատմությունները և հանրային հարցումը:

Հարցերի դեպքում կապ հաստատել ԿՌԿ Շահերի պաշտպանության և քաղաքականության մշակման թիմի հետ հետևյալ էլ.հասցեով՝  
[womenofarmenia@gmail.com](mailto:womenofarmenia@gmail.com)

Երևան, 2023

Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ

+374 94 56 56 26

## ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### *Քաղաքականության փաստաթուղթ*

**Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականությունն ուղղված է ծնելիության խթանմանը:**

Այս ուղղությամբ հատկապես վերջին տարիներին իրականացվել են մի շարք փոփոխություններ սոցիալական և առողջապահական քաղաքականություններում<sup>1</sup>:

#### **I. Սոցիալական ոլորտ**

Ծնելիության խթանման նպատակով պետության կողմից տրամադրվող հիմնական դրամական վճարումները ներառում են մայրության նպաստը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը:

Մայրության նպաստի և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի շահառուների շրջանակը վերջին տարիներին ընդլայնվել է, և դրանից կարող են օգտվել բոլորը: 2022թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը ծնված ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ պետության կողմից **մինչև երեխայի 6 տարեկանը լրանալը** վճարվելու է դրամական աջակցություն՝ ամսական 50 հազար ՀՀ դրամի չափով:

**Երեխայի ծննդյան միանվագ նպաստը** առաջին և երկրորդ երեխայի դեպքում 300 հազար ՀՀ դրամ է, երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 միլիոն ՀՀ դրամ, իսկ հինգերորդ և հաջորդ երեխաների ծննդյան դեպքում՝ 1.5 միլիոն ՀՀ դրամ: Վերջին տարիներին պետությունն իրականացրել է նաև երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության [պետական աջակցության երեք ծրագիր](#), որոնք միանվագ դրամական աջակցություններ են երեխա ունեցող ընտանիքներին հիպոթեքային վարկի մարման համար՝ նախապես նշված պայմաններով:



**Այսպիսով, ՀՀ սոցիալական քաղաքականությունը խթանում է ծնելիությունն ու քազմագավակությունը՝ ֆինանսական աջակցություն տրամադրելով ծնողներին:**

Ծնելիության խթանման նպատակով պետության կողմից տրամադրվող միանվագ դրամական վճարումները կարող են նպաստել կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և կանանց՝ գուգրնկերներից կախվածության աճին: Երեխայի ծննդյան արդյունքում դրամական աջակցության տրամադրումը կարող է լուրջ խթան հանդիսանալ բռնարար գուգրնկերոջ կողմից կնոջ մարմինը և վերարտադրողական ազատությունը չարաշահելու համար: Բռնի հարաբերություններում գտնվող կնոջը կարող են ստիպել ունենալ 3 և ավել երեխաներ՝ դրամական աջակցություն ստանալու համար:

Հատկանշական է, որ գրագետ և իրավունքահեն ծնելիության քաղաքականությունը պետք է առաջին հերթին ներդրումներ անի երեխայի խնամքը կազմակերպելու հարցում ծնողներին աջակցելու ուղղությամբ: Այս մասին է վկայում նաև եվրոպական երկրների փորձը: Հայաստանյան հասարակությունում երեխաների խնամքը մեծապես իրականացնում են կանայք: Ընտանիքում երեխաների թվի աճի հետ համատեղ աճում է նաև կնոջ գրադվածությունն ընտանեկան պարտականություններով, ինչի արդյունքում երեխա ունեցող կանայք հաճախ դուրս են մնում կրթությունից և աշխատաշուկայից:

Գենդերային հավասարության ապահովման և ծնելիության խթանման քաղաքականության՝ կանանց վրա անհամաչափ ազդեցությունը չեզոքացնելու համար պետությունը պարտավոր է.

1. Ներդնել համապատասխան քաղաքականություններ և գործողությունների ծրագրեր՝ ուղղված գենդերային հավասարության ապահովմանն ու ընտանեկան պարտականություններում տղամարդկանց ներգրավմանը,
2. Ապահովել համապատասխան ենթակառուցվածքներ երեխայի խնամքի կազմակերպման համար՝ ներառյալ մանկապարտեզներն ու նախադպրոցական այլ հաստատությունները:

Թեև ՀՀ աշխատանքային օրենսգիրքը տալիս է 5-օրյա վճարովի հայրության արձակուրդի հնարավորություն, սակայն դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ տղամարդիկ հիմնականում չեն օգտվում այդ իրավունքից կամ օգտվում են ոչ նպատակային, այսինքն՝ այդ ժամանակը չեն տրամադրում երեխայի խնամքի հարցում կնոջն աջակցելուն: Նույնը վերաբերում է նաև երեխայի խնամքի՝ չվճարվող արձակուրդի իրավունքին՝ մինչև երեխայի երեք տարեկանը լրանալը: Տղամարդիկ չեն օգտվում այս իրավունքից, և չկան հանրային արշավներ կամ պետական մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք կշահագրգռեն տղամարդկանց ներգրավվելու երեխայի խնամքի իրականացմանը:

**Նախադպրոցական հաստատությունները ևս գերծանրաբեռնված են,** և այս պայմաններում աշխատող շատ մայրեր մնացել են մենակ երեխայի խնամքը կազմակերպելու հարցում:

## **II. Առողջապահական ոլորտ**

Առողջապահական ոլորտում ծնելիության խթանումն իրականացվում է հակաաբորտային խոսույթի միջոցով: Պետությունը նաև ռեսուրսներ է կոնսոլիդացնում վերաբրտադրողական օժանդակ տեխնոլոգիաների հասանելիության խթանման ուղղությամբ, ինչը հստակ ցույց է տալիս, որ պետության առաջնահերթությունը ծնելիության խթանումն է:

Թեև ՀՀ օրենսդրությամբ 2003թ-ից ամրագրված է աբորտի իրավունքը<sup>2</sup>, սակայն 2016թ-ին ուժի մեջ մտան աբորտի հասանելիության մի շարք սահմանափակումներ, ինչպիսիք են՝ սեռի հիմքով աբորտի արգելքը, աբորտի համար դիմելիս պարտադիր 3-օրյա սպասելաժամանակն ու բժշկի խորհրդատվությունը՝ հղիության ընդհատման հնարավոր բացասական հետևանքների, ինչպես նաև՝ անցանկալի հղիությունը կանխելու միջոցների և (կամ) մեթոդների ընտրության վերաբերյալ:

Այս փոփոխությունները և դրանց շուրջ իրականացվող իրազեկման արշավներն օգտագործվում են հակաաբորտային խոսույթը տարածելու նպատակով: Տղայի նախապատվությամբ աբորտների թվի նվազեցմանն ուղղված արշավները հաճախ խրախուսում են բժիշկներին կողմնակալ խորհրդատվություն իրականացնել և փորձել համոզել կանանց ետ կանգնել ոչ միայն տղայի նախապատվությամբ, այլ նաև ցանկացած այլ պատճառով իրականացվող աբորտներից: Հանրային խոսույթում հաճախ սեռի հիմքով իրականացվող աբորտների դեմ խոսելիս նշվում է «ապագա մայրեր» ծնելու անհրաժեշտության մասին:

**Այս ամենը ցույց է տալիս, որ հակաաբորտային խոսույթը խրախուսվում է հենց պետության կողմից և առաջին հերթին տարածվում է բուժաշխատողների միջոցով:**

Մեկ այլ առողջապահական խնդիր է ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների հասանելիության պակասը: Սա լուրջ խոչընդոտ է գյուղաբնակ կանանց համար, քանի որ այդ համայնքներում բացակայում են դեղատները: Կանայք ստիպված են ճանապարհորդել մեծ քաղաքներ՝ հակաբեղմնավորիչներ ձեռք բերելու համար: Հայաստանի Հանրապետությունը չի տրամադրում անվճար հակաբեղմնավորիչներ կանանց, նաև չի իրազեկում ընտանիքի պլանավորման ժամանակակից միջոցների մասին: Կանանց սեփական մարմնի վերաբերյալ որոշումներ կայացնելու տեսանկյունից սա լուրջ մարտահրավեր է:

---

<sup>2</sup> Մինչև 12 շաբթյակյան հղիությամբ ժամկետը կատարվում է կնոջ գրավոր դիմումի համաձայն: 12-ից մինչև 22 շաբթյակյան հղիությամբ ժամկետում կնոջ համաձայնությամբ աբորտ կատարվում է բացառապես բժշկական կամ սոցիալ ակամ ցուցումների առկա ության դեպքում, որոնց ցանկը հաստատված է ՀՀ Կառավարության որոշմամբ: Առավել մանրամասն կարող եք ծանոթանալ [Աբորտի իրավունքի փաստաթղթում](#):

Առողջապահական տեսանկյունից պատշաճ ուշադրության պետք է արժանանան նաև **առողջապահական ենթակառուցվածքների սակավությունը և դրանց սպասարկման որակը և բուժաշխատողների ծանրաբեռնվածությունը**: Հիվանդանոցների գերծանրաբեռնվածությունը հաճախ վտանգի տակ է դնում ծննդկանների կյանքը:

Առողջապահական տեսանկյունից կարևոր են նաև վերարտադրողական տեխնոլոգիաների հիմնախնդիրները:

**Վերարտադրողական տեխնոլոգիաների կիրառմամբ ծնելիության խթանման պետական քաղաքականությունը** ՀՀ-ում հիմնականում ուղղված է վերարտադրողական տարիքի անպտղություն ունեցող և երեխա չունեցող կանանց: Հատուկ թիրախ են հանդիսանում սահմանամերձ շրջաններում բնակվող երկրորդային անպտղություն ունեցող 1 երեխա ունեցող զույգերը, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում կամ դրա հետևանքով զավակ կորցրած ծնողները, ում այս ծառայությունների գերակշիռ մասը տրամադրվում է անվճար հիմունքներով: Միննույն ժամանակ, ամրագրված տարիքային և առողջական ցուցիչների պահանջներն այն տրամաբանությամբ են ընտրված, որ վերարտադրողական տեխնոլոգիաների կիրառման արդյունքում հնարավորինս բարձր լինի երեխա ծնվելու հավանականությունը:

### **III. Սոցիալական նորմեր և արժեքներ, պետական հոետորաբանություն**

Սոցիալական նորմերը և արժեքները միանշանակ ազդում են բնակչության պետական քաղաքականության վրա: Գաղտնիք չէ, որ հայ հասարակությունում կանանց դերի վերաբերյալ կան կարծրատիպային մոտեցումներ, և պետական քաղաքականությունն էլ գերծ չէ նման դիրքորոշումներից: Լայն տարածում ունեցող կարծրատիպ է, որ կանանց անվիճելի տեղը հասարակությունում ընտանիքն է և նրանց առաջնային և կարևոր դերը՝ մայրությունը: Փոքր տարիքից կանանց սովորեցնում են ընտանիքի օրինակելի կին լինելու կարևորությունը և դրան նպաստող պարտականությունները<sup>3</sup>: Այս ֆոնին կարևոր է հասկանալ, թե կանանց ինքնորոշումը և մայրությունը գիտակցված ընտրելու իրավունքը ինչպես են արտահայտվում:

Ֆեմինիստական փիլիսոփայության տեսանկյունից՝ հեգեմոնիկ համակարգերի<sup>4</sup> ներքո կանանց ընտրությունը վիճելի հասկացություն է, քանի որ ռացիոնալ ընտրություն կատարելու համար մարդը պետք է ունենա ամբողջական տեղեկություն բոլոր հնարավոր տարբերակների

<sup>3</sup> Պատմականորեն հայ կանանց համար կարևոր գործառույթ է սահմանվում երեխաներ ունենալը, և սաճմարիտե հայ կական տարբեր համառեքստերի համար՝ 20-րդ դարակգբի Կ.Պոլ սի հայ կական համայ նքի, սի ու ռքի տարբեր համայ նքների և Զայ աստմի բոլ որ հանրապետոլ ու նների դեսքուլ մ: Այ ս՝ իրարից շատտարբեր համառեքստերու մ հայ կանանց պարսքը հայ լենիքին շարու նակուլ մ է «շատերեխաներ» ու նենալ ը մնալ : Կանայ ք ու նրանց մարմինները դառնուլ մ են ալ ն անոթները, որի միջոցով հայ լենիքը վերաճնվուլ մ է, և կանանց նշանակալ ի ներգրավվածուլ թյ ու նը ալ դ գործուլ մ ալ սքանով սահմանափակվուլ մ է:

<sup>4</sup> Համակարգ, որի միջոցով գերիշխող մշակույթը որոշակի ինստիտուտների միջոցով ֆորմալ իզացվուլ մ է և ամրափղուլ մ իր գերիշխող դիրքը: Այ ս եգրուլ թն օգտագործվուլ մ է ֆեմինիստական գրականուլ թյ ան մեջ՝ նկարագրել ու հայ լիշխանական մշակույթ թի ամրափղուլ մը աֆտական ինստիտուտների միջոցով:

մասին: Դժվար է խոսել մայրության գիտակցված ընտրության մասին, երբ ՀՀ բոլոր իշխանությունների օրոք պետական մակարդակով հայրիշանական նորմեր են քարոզվում, որտեղ կնոջ տեղը ընտանիքն է և նրա դերը՝ հայրենիքի վերածնունդին նպաստելը:

Այս տեսակի պրոնատալիստ խոսույթում հայ կինը հստակ դեր ունի՝ շատ երեխաներ ունենալ և նրանց դաստիարակել այնպես, որ դառնան երջանիկ, առողջ և հայրենասեր քաղաքացիներ՝ նվիրված հայրենիքի զարգացմանը:

#### IV. Եզրակացություն և առաջարկներ

Այսպիսով, Հայաստանում ժողովրդագրական քաղաքականությունը բոլոր ոլորտներում ուղղված է դեպի ծնելիության աճի խթանմանը և կարող է գնահատվել, որպես պրոնատալիստական: Իրավունքահեն, մարդու վերարտադրողական իրավունքները հարգող և կանանց իրավունքների միջազգային շրջանակն արտացոլող ժողովրդագրական քաղաքականությունը պետք է ներառի ինչպես պրոնատալիստական, այնպես էլ հակաատալիստական քաղաքականություններին բնորոշ տարրեր, որոնք թույլ կտան իր քաղաքացիներին ազատորեն օգտվել իրենց վերարտադրողական իրավունքներից՝ ունենալու կամ չունենալու երեխա, որոշելու երեխաների թիվն ու ծնվելու ժամանակաշրջանը և լինելու ինքնորոշված ծնող:

#### ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Ընդունել գենդերային հավասարությանն ու ընտանեկան պարտականություններում տղամարդկանց էական մասնակցությանն ուղղված քաղաքականություններ,
2. Ապահովել նախադպրոցական կրթության հասանելիությունը ՀՀ ամբողջ տարածքում,
3. Քայլեր ձեռնարկել աբորտի շուրջ հանրային խոսույթը փոփոխելու և աբորտի իրավունքի մասին հանրությանն իրազեկելու ուղղությամբ,
4. Ապահովել որակյան ծննդօգնության և աբորտի ծառայությունների հասանելիություն բոլորի համար,
5. Բնակչության քաղաքականությունները մշակելիս և իրագործելիս առաջնորդվել կանանց՝ սեփական մարմինը տնօրինելու ինքնավարության սկզբունքով:

Լրացուցիչ նյութեր թեմայի վերաբերյալ.

1. Berlin Institute for Population and Development (2020): "A contested issue. The rise in international opposition to the right to sexual self-determination" : [https://www.berlin-institut.org/fileadmin/Redaktion/Englisch/Studien/A\\_contested\\_issue/BI\\_Kairo\\_eng.pdf](https://www.berlin-institut.org/fileadmin/Redaktion/Englisch/Studien/A_contested_issue/BI_Kairo_eng.pdf)
2. European Parliamentary Forum on Population and Development (2018): "Restoring the Natural Order. The religious extremists' vision to mobilize European societies against human rights on sexuality and reproduction". Brussels: EPF.
3. Wichterich, Christa (2015): "Sexual and Reproductive Rights". Berlin: Heinrich Böll Foundation: [Boell-Foundation: Sexual and Reproductive Rights](#)
4. Gesine Akena, Patricia Hecht and Dinah Riese (2022): "Population policy: Between self-determined family planning and selective birth control". Heinrich Böll Foundation: [https://www.boell.de/sites/default/files/2022-05/Factsheet\\_Population.pdf](https://www.boell.de/sites/default/files/2022-05/Factsheet_Population.pdf)





[womenofarmenia.org](http://womenofarmenia.org)